Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիա (FIDH)
Քաղաքացիական հասարակության ինստիտուտ
Հայաստանի Հելսինկյան կոմիտե

Մամլո Հաղորդագրություն

Հայաստանի Համընդհանուր պարբերական դիտարկում

Հայաստանին կոչ արվեց իրականացնել 2008թ. մարտին տեղի ունեցած բռնության դեպքերի քննություն և երաշխավորել խոսքի ազատությունն ու հավաքների ազատության իրավունքը

Երևան, Ժնև, մայիսի 18, 2010 – Ժնևում տեղի ունեցած Հայաստանի Համընդհանուր պարբերական դիտարկման կապակցությամբ մեր կազմակերպությունները՝ Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիան (FIDH), Հայաստանում իր անդամ կազմակերպությունը՝ Քաղաքացիական հասարակության ինստիտուտը և Հայաստանի Հելսինկյան կոմիտեն, ողջունում են ՀՀ իշխանություններին ուղղված բազմաթիվ կարևոր առաջարկությունները և կոչ են անում Հայաստանին շուտափույտ կերպով իրականացնել դրանք:

«Այնուամենայնիվ մենք ցավով նշում ենք, որ մարդու իրավունքների պաշտպանության հարցերում որոշ թերություններ արձանագրելու և դրանք ուղղելու պատրաստակամություն դրսևորելու փոխարեն, ՀՀ իշխանությունները գտնում են, որ պատվիրակների կողմից արված առաջարկությունների կեսն արդեն իրականացվել են», – նշեց Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի /FIDH/ նախագահ Սուեր Բելասենը:

Մեր կազմակերպությունները ողջունում են այն փաստը, որ մի շարք երկրներ դատապարտեցին 2008թ. մարտի 1–ին և 2–ին տեղի ունեցած բռնությունները և կոչ արեցին, որ Հայաստանը իրականացնի դեպքերի լիարժեք քննություն և պատասխանատվության ենթարկի մեղավոր անձանց: 2008թ. նախագահական ընտրություններից հետո ընդդիմության կողմից Ազատության հրապարակում 9 օր շարունակ ցույցեր էին կազմակերպվել: Մարտի 1-ին և 2–ին իշխանությունները բռնի ձևով ցրեցին ցույցը և անհիմն կերպով ուժ կիրառեցին, որի արդյունքում 10 մարդ մահացավ և ավելի քան 130 մարդ վիրավորվեց: Մեր կազմակերպությունները ցավով նշում են, որ ՀՀ պատվիրակությունը այս դեպքերի առնչությամբ քննություն իրականացնելու կամք դրսևորելու փոխարեն միայն պնդեց, որ ոստիկանության կողմից կիրառված բռնության ապացույցներ չկան և համարեց, որ այս առաջարկությունն արդեն իրագործվել է:

Արդարադատության համակարգի անկախության բացակայությունը նույնպես քննադատության է արժանացել մի շարք երկրների կողմից: Գերմանիան և Հունգարիան առաջարկեցին, որ Հայաստանը հրավիրի Դատավորների և փաստաբանների անկախության հարցերով հատուկ զեկուցողին:

Հայաստանի դիտարկման մյուս առաջնային հարցը՝ քաղաքացիների, լրագրողների և իրավապաշտպանների խոսքի ազատությունն է և հավաքների ազատության իրավունքը: Բազմաթիվ պատվիրակություններ իրենց մտահոգությունը արտահայտեցին խաղաղ հավաքների ազատության իրավունքի շարունակվող սահմանափակումների վերաբերյալ՝ 2008թ. մարտին «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» օրենքում փոփոխություններ կատարելուց

FIDH is a federation of 155 non-governmental human rights organizations operating in more than 100 countries. FIDH has a consultative status before the United Nations, UNESCO, and the Council of Europe, and observer status before the African Commission on Human and Peoples' Rights.

http://www.fidh.org - http://www.blogfidh.org
Press contact: +33.1.43.55.90.19 / 14.12

հետո։ Հայաստանին նաև բազմիցս կոչ արվեց հստակ չափանիշ սահմանել հեռարձակման լիցենզիաների տրամադրման վերաբերյալ։ «Մելտեքս ՍՊԸ–ն և Մեսրոպ Մովսիսյանն ընդդեմ Հայաստանի» գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գտել է, որ տեղի է ունեցել 10–րդ հոդվածի խախտում՝ հեռարձակման լիցենզիաների տրամադրումը անօրինական մերժելու համար։ Բացի այդ, դատապարտվեց նաև 2008թ. ի վեր լրագրողների նկատմամբ ոստիկանության կողմից բռնության կիրառումը։

Մի շարք երկրներ նաև մտահոգված էին իրավապաշտպանների աշխատանքային պայմաններով։ ԱՄՆ–ն շեշտեց, որ քաղաքացիական հասարակության ակտիվ գործիչները պետք է կարողանան աշխատել առանց խոչընդոտների։ Նորվեգիան ընդգծեց, որ նրանց դեմ ուղղված հարձակումները պետք է քննության ենթարկվեն, և մեղավոր անձինք պետք է պատասխանատվության ենթարկվեն։

Լուրջ մտահոգություններ արտահայտվեցին գենդերային խտրականության արմատացած դրսևորումների վերաբերյալ, մասնավորապես կանանց նկատմամբ ընտանեկան բռնությունների, որոշումների կայացման գործընթացներում կանանց մասնակցության, և կանանց նկատմամբ խտրականության մասին օրենսդրության բացակայության վերաբերյալ։ Թրաֆիքինգի վտանգի տակ գտնվող կանանց պաշտպանության, ինչպես նաև տուժողների աջակցության և ապաստանի տրամադրման հարցերը նույնպես հատուկ ուշադրության առժանացան։

Մեր կազմակերպությունները ողջունում են ներկայացված առաջարկությունները, կշարունակեն հետևել իրավիճակին և նպաստել բարեփոխումների իրականացմանը։ Այնուամենայնիվ, արդյունքների կարելի է հասնել միայն եթե Հայաստանի Հանրապետությունը հետևողականորեն իրականացնի առաջարկությունները և գործադրի բոլոր անհրաժեշտ ջանքերը իրավիճակը բարելավելու համար։

Մամուլի պատասխանատու՝ Կարին Ապի/Ֆաբիեն Մետրե
+ 33 1 43 55 14 12/ + 33 1 43 55 90 19

FIDH is a federation of 155 non-governmental human rights organizations operating in more than 100 countries. FIDH has a consultative status before the United Nations, UNESCO, and the Council of Europe, and observer status before the African Commission on Human and Peoples' Rights.

http://www.fidh.org - http://www.blogfidh.org
Press contact: +33.1.43.55.90.19 / 14.12